

շեմիների և այլ միասին։ Դիտաւորեալ սխալներ՝ միտումնաւոր կառուցւածքների համար։

Ամբողջ ժողովածուն արժէք ունի միայն իրեւ նիւթերի եւ վաւերազրերի

աղբիւր այդ դէպէերի մասին, իսկ Սեֆիի մեկնարանուրիւններն, ի հարկէ, անարժէք եւ անընդունելի բաներ են մեծ մասամբ։

Ն. ԲԱԴԱԼՅԱՆ

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ՝ Պատմական խնդիրներ», Հրատ.՝ «Արագ»

Հրատ. Ընկերութեան, թիւ 1, Պէյրուր, 1937.

158 էջոց այս գիրքը իր մէջ ամփոփում է 4 յօդած՝ «Մարքսիզմը և Աղդամյին հարցը», Մէծ յորելեանի առթիւ, «Մտեփ. Նազարեան» եւ «Մկ. Փորթուզալեան»։ Այս յօդածներից առաջինը եւ «Մտ. Նազարեան»-ի երկու գլուխները արտասպած են «Դրօշակ»-ից, «Մէծ յորելեանի առթիւ»-ն ու «Մ. Փորթուզալեան»-ը՝ «Էլեմենտ», իսկ «Մ. Նազարեան»-ի վերջին գլուխը՝ «Համազային Տարեգիրք»-ից։ «Պատմական խնդիրներ»-ը, ենդինակի ասելով, «մէկ փորձ է մտքի մէկ պոտոյտ կատարելու հասարակական - քաղաքական գաղափարների աշխարհում»։ Եւ իրապորիչ, յաջող ու արժէքաւոր փորձ, պէտք է առելացնենք մենք։

Գ. Գիւզալեանը մեր այս սակաւարի գարզացած պատմագէտներից է — Գէորգեան Ճեմարանի ու Փարայի Համալսարանի ընթացաւարտ եւ փորձաւածուուցիչ ու գրող — որ ո՛չ միայն տէր է մասնագիտական հմտութեան, այլ եւ սիրում է քափանցել պատմական - հասարակական երեւոյթների խորքը եւ նիւթը մշակել գիտական բարեխնդուրեամբ։ Ունենալով հանդերձ փիլիսոփայական որոշ աշխարհայեցք՝ նա գերծ է դաւանամալական նեղմուռիւն - նից, եւ քննութեան առարկայ վերցրած խնդիրները ուսումնասիրում, վերլուծում ու ներկայացնում է կատարեալ ազատութեամբ, միակ ելակէտ ունենալով առարկայական նշմարտութիւնը, որքան, ի հորկէ, հնարաւոր է առարկա-

յականուրիւնը ընկերային - պատմական հարցերում։

Իր այս յատկուրիւնները փայլուն կերպով երեւան են զալիս եւ «Պատմական խնդիրներ» գրքում։ Այսպէս, «Մարքսիզմը եւ Ազգային հարցը» տուածում Գիւզալեանը ամենամահապերբեկիս հմտութեան է ենթարկում մարքսիզմի ըմբռումները ազգային հարցի մասին, ենթում է նրա մոլորութիւնները եւ յանում միակ նշմարիտ եղանակուրեան, թիւ՝ «ազգութիւնը մշակուրային միուրիւն է, ընդհանրութիւն»։ Ի հարկէ, խօսքը զաղափարական բնորոշման մասին է եւ ոչ բնախոսական - կենսարանական։ Յետոյ՝ «ազգութիւնը ստեղծագործութիւն է, մտքի, հոգու, նիւթական ու քաղաքական ստեղծագործութիւն, իսկ դրա համար անհրաժեշտ է ազատութիւն, ազգային ուժերի լիակատար ազատութիւն»։ Ազատութիւնը ընկերային բոլոր երեւոյթների լուսաբնութեան նախապայմանն է Գիւզալեանի համար։

Յօդածը վերջանում է ենթեւալ խօսերավ. «Մշակույթը իր էութեամբ եւ հիմքով մարդկային է, կազմած է մարդու զաղափարի հետ. մարդի է, որ մշակում է, ստեղծում է նրա բան. սակայն, մարդը ապրում եւ ստեղծում է ազգային մշակավայրում ու կրում է նրա կնիքը։ Մարդու ստեղծագործութիւնը ազգային ձեւով է հանդէս գալիս։ Իր հիմքով մարդկային՝ մշակույթը արտայալութեամբ ազգային է, կազմակերպութեամբ միջազգացչն է»։

Ըստ էութեան, միտքը նիշտ է, ի հարկէ, բայց ձեւակերպութիւնը կարող է տեղիք տալ թիւրիմացութեան, շփոքելով բռլշեւիկների «ձեւով ազգային, բովանդակութեամբ միջազգային» բանաձեւի հետ։ Քիչ է ասել՝ «մշակոյթը արտայայտութեամբ ազգային է»։ Այս ազգային է եւ «իր հիմքով», այսինքն՝ բովանդակութեամբ։ «Միջազգային»-ը «ազգային մշակոյթների» համագումարն է։

Մտածելու շատ նիւթ է տալիս եւ «Մեծ յորելեանի առթիւ» խիստ հետաքրքրական ուսումնասիրութիւնը։ Գիւղակեանը, լեզուի ու գրի կողքին, կարեւոր դեր է տալիս կրօնին եայութեան կառացման գործում։ «Հայկական քրիստոնեութիւնը հայոց ազգային կագմակերպութեան մէկ ձեւն է եւ ամենէն բնորոշ ձեւը»։ Ինչ որ պատմականորէն, ի հարկէ, շատ նիշտ է, եւ հետեւանք է հայոց պետականութեան տարապայման տկարութեան ու հայ ժողովրդի ապրած իւրայստուկ պայմանների։

Բովանդակալից ու հիւթեղ են եւ միւս երկու յօդւածները՝ Ստ. Նազարեանի և Մկ. Փոքրուգալեանի մասին, որոնք ընդգրկում են 19-րդ դարի հայոց պատմութեան երկու նշանակալից շրջաններ — Ս. Նազարեանը որպէս մըշակութային ազգութեան և մշակութային բաղականութեան գաղափարախոս, և Մ. Փոքրուգալեանը՝ իրքեւ բաղական յեղափոխութեան ուսիլիրա։ Գիւղակեանը տալիս է ո՛չ միայն այդ երկու խոշնը անձերի գաղափարներն ու գործը, այլ եւ ժամանակաշրջանի պայմաններն ու փիլխանիայութիւնը, ինչ որ պակաս կարեւոր չէ։ Գիւղակեանի վերլուծական միտքը քափանցում է պատմական դէմքերի ու խնդիրների խորերը և գունագեղ վերձինով պատկերացնում է ժամանակը, գործերն ու գործիչները։ Մանաւանդ հայ իրականութիւնը մօտէն նաև աչելու փափազ ունեցող երիտասարդութեան համար խիստ քանզագին սնունդ են Գիւղակեանի յօդւածները։

Ս. Վ. Պ.

